

**ՖՈՔԵԱՌԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարը (Լոռի), Լոռու բարբառ  
(Խոսվածք)**

Մի մարթ ու կնիկ են ըլրմ, քյասիք են ըլրմ, շատ էլ ըրեխեք են ունենրմ: Էղ ըրեխանցը ոնչ տերտերն ա կնքրմ, ոնչ էլ կնքավորն ա զալիս խտտրմ:

Էղ մարթը վի ա կենրմ, զնրմ ա աստծու վրա կոփվ, թե.— Խի<sup>՝</sup> ես ինձ ըրեխեք տալի, որ ոնչ կնքավորն ա զալի, ոնչ էլ տերտերն ա կնքրմ:

Գնալիս ճամփրմը ֆոքեառը ջիրմ ա: Ասրմ ա.— Էղ ո՞ւր ես զնրմ:

Ասրմ ա.— Գնրմ եմ աստծու վրա կոփվ, ինձ ըրեխեք ա տալի, հմա ոնչ կնքավորն ա զալի, ոնչ էլ տերտերն ա կնքրմ:

Ֆոքեառն ասրմ ա.— Գնալ մի, ես տերտերին կասեմ, կգա կկնքե, ես էլ կնքավորը կլիմ:

Էնա զալիս են կնքրմ:

Ֆոքեառն ասրմ ա.— Ես քի մի բան կասեմ, դու նհե արա, թե խոսկիս անգաձ անես, շատ կհարստանաս:

Ասրմ ա.— Ի՞նչ ա:

Ասրմ ա.— Մի փլասի միշին մոխրի փելփին էլ կապե, մի քիչ բռնոթի էլ մի քիչ էլ մեր ֆող, գեղըմը որ իիվանդ կլի, զնա ասա «Ես կսաղընեմ»: Թե կտենաս, որ ես զլիսի կրանն եմ, էնա զիդենաս որ ես ֆոքին առնիլ տիմ, թոհմաթ արա, ասա, «Տնաքանդներ, եղացրել եք, մի քիչ շուստ իմաց կտեիք, էլի<sup>՝</sup>»: Թե խու տենաս, որ ես ոտների կրանն եմ, ոտդ դայիմ դեմ արա, ինչքան փող ուզես— կտան: Էն փլասնու փթաթածն էլ ջուր արա, խմացրա, վի կկենա: Հմա մի պայման կդնեմ, որ օրը որե «Անըն հոր և օրթոր» («Հանուն հոր և որդվո») շասիր քու ֆոքին էլ տիմ առնիլ:

Էնա տիենց ա անըմ, էղ քյասիք մարթը հարստանըմ ա: Մի օր էլ ճամփա ա գնալիս ըլրմ, մտահան ա արած ըլրմ ֆոքեառի ասածը, ասրմ չի «Անըն հոր և օրթոր»: Ճամփի կիսրմը մութն ընզնըմ ա թե չէ, ֆոքեառն ըլաքին դուս ա զալի, ասրմ ա.— Ֆոքիդ առնիլ տիմ:

Ասրմ ա.— Թող զոնյա ճամփիցը տուն հասնիմ:

Ասրմ ա.— Չէ, պայմանը պայման ա, ըստի էվետ ֆոքիդ առնիլ տիմ:

Նկե ընդի էվետ ֆոքին առնըմ ա, ճամփրմը վե զձրմ:

Ամենքն էլ մի մհանով մեռնըմ են, ո՞վ ա սադ մնըմ ըշխարըմը: